«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ HAYCERT «HAYCERT» LLC

ք. Երևան, Նորք Մարաշ, Սարգիս Բաղդասարյան փող. տուն 14, Հեռ. +374-94107701 E-mail: haycert@haycert.am
Sargis Baghdasaryan str., bld. 14, Nork Marash, Yerevan, Armenia Tel. +374-94107701

Տեղեկատվություն արտադրանքի համապատասխանության գնահատման մասին

HC 17065-7-2024 «Արտադրանքի սերտիֆիկացման մարմնի համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման կարգ» ընթացակարգը նկարագրում է սերտիֆիկացման/հայտարարագրման սխեմայով նախատեսված սերտիֆիկացմա/հայտարարագրման աշխատանքների միասնական կարգը: Սերտիֆիկացման որոշ սխեմաներով նախատեսված դեպքերում HC 17065-7-2024 ընթացակարգը նախատեսում է արտադրության վիճակի վերլուծության գնահատման ծրագրեր/հարցաթերթիկ: Սերտիֆիկացման գործընթացում գնահատման փուլն իրականացվում է արտադրանքի սերտիֆիկացման մարմնի փորձագետների կողմից, որոնց համար հասանելի է գնահատման աշխատանքների (ներառյալ՝ փաստաթղթերի մշակում և վերլուծություն, նմուշառում, հսկողություն և աուդիտ) իրականացման համար անհրաժեշտ նորմատիվատեխնիկական փաստաթղթերը և այլ ռեսուրսներ:

Եթե «ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի սերտիֆիկացման մարմինը արտադրանքի գնահատման համար հիմք է ընդունում մինչև հայտատուի կողմից արտադրանքի սերտիֆիկացման հայտի ներկայացումը ստացված արդյունքները, ապա սերտիֆիկացման մարմինն իր վրա է վերցնում այդ արդյունքների համար ողջ պատասխանատվությունը և համոզվում է, որ գնահատում իրականացնող մարմինը բավարարել է սերտիֆիկացման սխեմայով սահմանված պահանջները:

Գնահատման արդյունքում սերտիֆիկացման մարմինը ձևակերպում է ՍՓ-ով ներկայացվող պահանջներին արտադրանքի համապատասխանության գնահատման եզրակացություն: Գնահատման գործընթացում բացահայտված բոլոր անհամապատասխանությունների վերաբերյալ սերտիֆիկացման մարմինը տեղեկացնում է հայտատուին: Եթե հայտատուն ցանկություն է հայտնում շարունակել սերտիֆիկացման գործընթացը, ապա մարմինը տրամադրում է անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումների ցանկը: Եթե հայտատուն կրկին համաձայնվում է իրականացնել այդ միջոցառումները, ապա դրանց ավարտին սերտիֆիկացման մարմինի կողմից կատարվում է նոր գնահատման գործընթաց: Այդ գործողությունների վերաբերյալ բոլոր գրառումները փաստաթղթավորվում են մինչև տվյալների վերլուծության աշխատանքները:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մարտիրոսյան

30.06.2025թ